



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 22 - Ա  
20 մայիսի 2013 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ  
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2012-2013 ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՓՈԽԱԴՐԱԿԱՆ,  
ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի, 1.21-րդ կետի «գ» ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012թ. մայիսի 3-ի N 388-Ն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013թ. մայիսի 3-ի N 523-Ա/Ք հրամանների պահանջները

**Կարգադրում եմ՝**

1. Մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրեններին՝
  - 1) 2012-2013 ուսումնական տարին ավարտել մայիսի 24-ին՝ ապահովելով առնվազն 30 ուսումնական շաբաթ առաջին դասարանների, 32 ուսումնական շաբաթ՝ երկրորդ դասարանների և 34 ուսումնական շաբաթ՝ երրորդից տասներկուերորդ դասարանների համար.
  - 2) 2012-2013 ուսումնական տարվա շրջանավարտների «Վերջին դաս» խորագիրը կրող միջոցառումներն անցկացնել միայն դպրոցներում՝ դասացուցակով նախատեսված վերջին դասաժամին.
  - 3) բնակության վայրից դուրս դպրոցականների էքսկուրսիաների և այլ միջոցառումների կազմակերպումը համաձայնեցնել մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության հետ ու ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները դպրոցականների առողջությունն ու կյանքի անվտանգությունն ապահովելու համար.

- 4) 2012-2013 ուստարվա աշակերտների փոխադրման (գիտելիքների ստուգման), ավարտական և պետական ավարտական քննությունները կազմակերպել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի մայիսի 3-ի N 388-Ն և 2013 թվականի մայիսի 3-ի N 523-Ա/Ք հրամաններով հաստատված կարգերի պահանջներին համապատասխան.
- 5) սույն կարգադրությունը ընթերցել բոլոր դասարաններում և մասսայականացնել ծնողական ժողովներում:
2. Հաստատել 2012-2013 ուսումնական տարվա մեդալի հավակնորդների «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաներից կենտրոնացված կարգով քննությունների նախապատրաստման և անցկացման հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Մեդալի հավակնորդների «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաներից կենտրոնացված քննությունները կազմակերպել Գավառի N 4 հիմնական դպրոցում:
4. ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝ համագործակցել մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների հետ՝ կազմակերպելու և պատշաճ մակարդակով անցկացնելու շրջանավարտների «Վերջին դաս» միջոցառումները:
5. ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչությանը (պետ՝ Վ. Նադարյան)՝ համապատասխան միջոցառումներ ձեռնարկել շրջանավարտների «Վերջին դաս» միջոցառման և միասնական քննությունների օրերին հասարակական կարգի պահպանման ուղղությամբ:
6. Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը /պետ՝ Գ. Բադալյան/՝ մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններում վերահսկել սովորողների փոխադրման (գիտելիքների ստուգում), ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման աշխատանքները:
7. Մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին /վարիչ՝ Հ. Շահբազյան/՝ տեղական մամուլով, հեռուստատեսությամբ և ռադիոյով լուսաբանել քննությունների ընթացքը:
8. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Հակոբյանին:
9. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝



Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ